



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման վրա

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Աշոտի Ենգոյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց

*Երևան 2023*

# Բովանդակություն

Ներածություն.....3

## Գլուխ 1

Սովորողի հոգեբանական զարգացման որոշ օրինաչափություններ .....6

## Գլուխ 2

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության հոգեբանամանկավարժական հայեցակետերի մասին.....9

## Գլուխ 3

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն առարկայի դասավանդման ընթացքում՝ որպես դիդակտիկ միջոց.....15

Եզրակացություններ.....20

Օգտագործված գրականության ցանկ.....21

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր նորագույն տեխնոլոգիաները դարձել են առօրյա կյանքի անբաժանելի մասը: Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումն ազդել և վերափոխել է մարդկային կյանքը մի շարք ոլորտներում, ինչպիսիք են՝ արդյունաբերությունը, կրթությունը, գիտությունը, մշակույթը և այլն: Դա էլ իր հերթին խթանում է նորարարությունները՝ ստեղծելով նոր որակ ու մակարդակ: Էլ. փոստը, բջջային հեռախոսները, տեքստային հաղորդագրությունները, սոցիալական ցանցերն առօրյա կյանքի մի մասն են: 21 - րդ դարը համարվում է գիտելիքի դարաշրջան, մի ժամանակաշրջան, երբ գիտելիքն ունի առանցքային սոցիալական և տնտեսական արժեք: Իսկ այսօրվա երիտասարդությունը բնութագրվում է որպես ցանցային սերունդ, որը մեծացել է նոր տեխնոլոգիաների և ինտերնետի մշակույթում և դիտում է համացանցը՝ որպես սոցիալականացման և աշխատանքի անբաժանելի բաղադրիչ: Այնուամենայնիվ, կրթական պրակտիկան էապես չի արտացոլում կամ անդրադառնում այս նոր իրականությանը: Կրթական համակարգը պետք է կարողանա համընթաց քայլել ժամանակի պահանջներին և առաջարկել աշխատանքային նոր մեթոդներ: Արդի հասարակությունը «տեղեկատվական հասարակություն» է, որն էլ իր հերթին առավել հրատապ է դարձնում կրթական համակարգ-հասարակություն փոխհարաբերության նոր սահմանումները: Սկսած 1980-ական թվականներից հաշվիչ հնարավորությունների, համակարգչային ծրագրերի և ցանցերի զարգացումները, ինչպես նաև տեխնոլոգիաների գների նվազումը և հասանելիության մեծացումը, ընդլայնել են տեղեկատվական տեխնոլոգիաների սոցիալ-տնտեսական ազդեցության դաշտը: Կառավարման ու վարչարարության գիտական մեթոդները վերջին տասնամյակներում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումների շնորհիվ ամբողջովին փոխվել են: Ընդհանուր առմամբ, տեղեկատվության և հեռահաղորդակցության բնագավառի հեղափոխությունը կարելի է համեմատել արդյունաբերական հեղափոխության հետ, սակայն դժվար է ամբողջապես պատկերացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության բոլոր կողմերը հասարակության վրա:

Կրթական համակարգը գիտելիքի և տեղեկատվության արտադրության ամենամեծ և հիմնական կառույցն է: Այսօր հանրակրթական դպրոցները և բարձրագույն ուսումնական հաստատությունները կատարում են ոչ միայն գիտելիքների փոխանցման, կարողությունների բացահայտման և ընդունակությունների զարգացման գործառույթները, այլև կրթում և դաստիարակում են ստեղծագործական միտքը և

նորարարական-նախաձեռնողական միտումները: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծումը կրթության ոլորտ նպատակ ունի ապահովել «ճկուն» ուսումնառություն: Այն ենթադրում է կրթական կառույցների, ուսուցիչների, դասախոսների, աշակերտների և ուսանողների միջև բազմաշերտ փոխհարաբերություններ՝ առաջացնելով ուսուցման մեթոդների ու միջոցների նորովի մոտեցման անհրաժեշտություն: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը կրթական համակարգում խթանում է ինտերակտիվ և կենսունակ ուսուցման մեթոդները: Ուսուցումը կազմակերպվում է առավել փոխգործակցային հիմքերով՝ «աշակերտակենտրոն» և «ուսանողակենտրոն» մոտեցումներով, որոնք էլ սովորողներին դարձնում են առավել ակտիվ ու ստեղծագործ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ իրականացվող կրթությունը նպաստում է սովորողների ինքնուրույն աշխատելուն, թիմային փոխհարաբերություններ ծավալելուն և վերլուծական ու քննադատական հայացքով դիտարկելու կարողություններին: Ժամանակակից աշխարհում կրթական համակարգը պետք է պարբերաբար լրացվի ու զարգանա: Ընդհանուր առմամբ տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են նպաստել անձի ինքնակրթությանն ու ինքնազարգացմանը, ինչպես նաև աշխատողների վերապատրաստման գործընթացին թե՛ տեսական, թե՛ գործնական գիտելիքների ու հմտությունների առումով: Սակայն կրթական համակարգում այդ հնարավորությունների ներդրումը պահանջում է համապատասխան ենթակառույցներ՝ տնտեսական, հասարակական, մշակութային և այլն:

**Թեմայի արդիականությունը** պայմանավորված է կրթական համակարգի վրա տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ ազդեցությամբ, որն էլ իր հերթին նպաստում է գիտելիքների արագ զարգացմանը, որոշների արդիականության կորստին և հետևապես ուսուցման ծրագրերի բովանդակության փոփոխությանը: Այն առավել հրատապ ու անհրաժեշտ է հատկապես Հայաստանի համար՝ որպես զարգացող երկիր, և պահանջում է համակողմանի ուսումնասիրություններ:

**Հետազոտության նպատակն** է՝ հետազոտել և բացահայտել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման վրա:

**Հետազոտության խնդիրներն են՝**

- Ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական գրականությունը,
- Ուսումնասիրել սովորողի հոգեբանական զարգացման որոշ օրինաչափություններ,

- Անդրադառնալ ուսումնական գործընթացում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դրական և բացասական կողմերին,
- Ուսումնասիրել և ներկայացնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես դիդակտիկ միջոց, որոնք կարող են բարձրացնել ուսման որակը:

**Քանալի բառեր:** Տեղեկատվական տեխնոլոգիաներ, կրթական համակարգ, ուսուցման գործընթաց, սովորողի հոգեբանություն:

## **ԳԼՈՒԽ 1 Սովորողի հոգեբանական զարգացման որոշ օրինաչափություններ**

Ժամանակակից հոգեբանությունը զգալի գիտելիքներ ու փաստեր է հավաքել և կուտակել երեխաների հոգեբանական և ֆիզիկական զարգացման օրինաչափությունների, դրանց դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք մանկավարժները պետք է հաշվի առնեն դասավանդման մեթոդները մշակելիս և ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրները լուծելիս: Ավելի ճշգրիտ լինելու համար հոգեբանական նվաճումների հարուստ գանձարանից մենք կարող ենք առանձնացնել մի քանի առաջնորդող սկզբունքներ: Երեխան ամենից առաջ զարգացող էակ է, և այդ զարգացումը ենթակա է քիչ թե շատ կոշտ օրինաչափությունների: Յուրաքանչյուր տարիքում մարդը հասնում է զարգացման մի միջին մակարդակի, որը հնարավորություն է տալիս նրան յուրացնել-իմաստավորել աշխարհի մասին գիտելիքների ու հասկացությունների մի սահմանափակ ոլորտ: Այն բոլոր գիտելիքները, որոնք գտնվում են այդ ոլորտից դուրս, նա չի կարող յուրացնել: Բարդ ուսումնական ծրագրերն ու դասագրքերը մարդու ֆիզիկական և հոգեբանական զարգացման օրինաչափությունների չիմացության ու չկիրառման արդյունք են, որոնք էլ հանրակրթական դպրոցներում ուսման հանդեպ առաջացնում են սովորողների նկատելի անտարբերություն:

Տարիքային յուրաքանչյուր փուլ բնութագրվում է ոչ միայն իմացական զարգացման որոշակի պոտենցիալ հնարավորություններով, այլև մտածողության տիպով: Այս մոտեցումը դասավանդման պրակտիկայում ներառելը կարևոր և անհրաժեշտ պայման է՝ կրթության յուրաքանչյուր աստիճանում զարգացման բավարար մակարդակ ապահովելու համար: Օրինակ՝ մանկահասակ երեխայի մտածողությունն ակնառու-պատկերավոր (ոչ վերացական) բնույթ ունի: Հետևաբար այս տարիքի երեխաների ուսուցումն արդյունավետ է, եթե այն իրականացվում է պրակտիկ գործունեության միջոցով, որի պայմաններում սովորողը շատ բաներ հասկանում է սեփական փորձով: Այս համատեքստում համապատասխան դասագրքերը, իրենց հերթին, պետք է հարուստ լինեն նկարազարդ և տեսողական նյութերով, իսկ տեքստերը հեղեղված չլինեն սահմանումներով ու բանաձևերով:

Մարդիկ, հատկապես երեխաները, հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելուն և փնտրելուն: Այն գիտելիքները, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել, պահպանվում են երկարաժամկետ հիշողության մեջ: Ըստ էության՝ երեխայի համար

ուսուցումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ ինքն է իր կրթության սուբյեկտը և գիտակցաբար իր առջև դնում է կրթական նպատակներ ու դրանց հասնելու համար ազատորեն կազմակերպում իր ուսումնական գործունեությունը: Միայն այս հանգամանքներում է գիտելիքն անհատի համար իմաստ ու արժեք ստանում՝ վերածվելով հոգևոր հարստության:

Անդրադառնալով երեխայի զարգացման հոգեբանական մեխանիզմներին՝ պետք է նշել, որ երեխաներն ուզում են բոլոր երևույթներն ակնառու պատկերացնել: Նրանց հարկավոր է պրակտիկ գործունեություն և բնության հետ կենդանի շփում, քանի որ ցանկանում են հասկանալ իրենց մատուցվող գիտելիքների իմաստը:

Ուսուցումն ու դաստիարակությունը փոխկապակցված են և իմաստալից է խոսել միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին: Այնուամենայնիվ, կրթական պրակտիկայում դաստիարակության և ուսուցման ոլորտները նկատելի չափով տարանջատվում են՝ հնարավորություն չտալով ապահովել կրթության ընդհանուր որակի ցանկալի մակարդակ:

Թեև ուսուցմամբ կարելի է դաստիարակչական որոշակի խնդիրներ լուծել, սակայն երիտասարդ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների սերմանումը հիմնականում իրականացվում է այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընթացի ընդհանուր կուլտուրան, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ինչպես նաև օրենքի գերակայության հաստատումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից:

Ըստ էության՝ միջավայրը առանցքային դեր է խաղում կրթության և դաստիարակության հարցում: Եթե հասարակությունը չի ապրում ժողովրդավարական արժեքներով, ապա չի կարող սերմանել և խրախուսել այդ արժեքներն ապագա սերունդների մեջ: Մարդիկ հակված են ընդօրինակել և, որպես վարքագծի նորմեր, ընդունել այն ամենը, ինչ նրանք տեսնում են, հատկապես այն, ինչն էականորեն ազդում է նրանց վրա և կարևոր է նրանց սոցիալական առաջընթացի ու բարոյական զարգացման համար: Հետևաբար, կրթական, դաստիարակության և սոցիալականացման մարտահրավերների համատեքստում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն: Ամենակարևորը կրթության մեջ ներգրավված անձանց՝ կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան է, աշխատանքային և կրթական պայմանների որակը, ուսումնական գործընթացում սովորողների ազատության և ինքնուրույնության

աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը: Այն իրավիճակներում, երբ բացակայում են ընդհանուր ռազմավարությունը և օպտիմալ տեխնոլոգիաները, ուսուցչի դերը դառնում է ավելի կենսական: Այսպիսով, ուսուցչի բարոյական նկարագիրը, մեթոդական պատրաստվածության մակարդակը, նրա անձնային ու ինտելեկտուալ որակները դաստիարակչական մեծ ներուժ ունեն:




**ԳԼՈՒԽ 2 ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ**

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը հեղափոխեց մարդկային գործունեության տարբեր ոլորտներ: Այսօր ժամանակակից մարդը քաղաքակրթական զարգացումների ներկա փուլում ժամանակին համահունչ կերպով ապրելու և գործելու համար համակարգչային տեխնոլոգիաներ կիրառելու անհրաժեշտություն է զգում, որովհետև այն առաջադիմական բազում փոփոխություններ է մտցնում մարդկային գործունեության տարբեր ոլորտներում, որակապես փոխում զանգվածային լրատվության միջոցների, կապի համակարգերի աշխատանքը, պետական ինստիտուտների գործունեության սկզբունքները և անհամեմատ բարձրացնում զինվորական տեխնիկայի հզորությունն ու արդյունավետությունը: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, մասնավորապես համակարգիչը, կարող է տարբեր աշխատանքներ կատարել՝ կախված մարդու ցանկություններից: Բազմաթիվ հետազոտություններ բացահայտել են մարդու՝ հատկապես դեռահասի՝ որպես հասարակության առավել խոցելի խումբ, հոգեկան առողջության վրա համակարգչային տեխնոլոգիաների ոչ միայն դրական, այլև բացասական ներգործության հնարավորությունները: Հարկ է նշել, որ այդ հետազոտություններից շատերը իրականացվել են հենց համակարգիչների և համացանցի օգնությամբ, քանի որ համակարգիչները բավականին հարմար միջոց են հոգեբանական ստուգումներ իրականացնելու համար: Օրինակ՝ աշխատանքային սեղանին որպես ֆոն դրված նախշի դիտարկումով հնարավոր է անցկացնել յուրօրինակ հոգեբանական թեստ, որի միջոցով հարմար է ուսումնասիրել տվյալ անձի հոգեբանական պրոյեկցիայի մեխանիզմը, այսինքն՝ մարդու գաղտնի պատկերացումները, այդ թվում՝ սեփական անձը և խնդիրները, որոնք նա փոխադրում է ձեռքի տակ եղած նյութի՝ այս դեպքում ցուցասարքի վրա (ծրագրավորվող պատկեր): Հնարավոր է նաև հոգեշտկիչ աշխատանքներ անցկացնել օրինակ՝ համակարգչային դիզայնը դիտարկելով որպես արտ-թերապիայի տարր՝ օգտագործելով արտ-թերապիայի և անիմաթերապիայի հնարավորությունները: Հետաքրքիր է իմանալ հոգեբանամանկավարժական ինչ սպառնալիքներ կարող են լինել հոգեբանական տեսանկյունից փխրուն խմբի՝ դեռահասների և պատանիների համար: Հոգեբանական

հետազոտություններից մեկը անդրադարձել է այս հարցին, որի արդյունքները ներկայացնում ենք գծապատկերի տեսքով:

**Գծապի 1.** Ժամանակակից ՏՀՏ-ների սրբնթաց զարգացման հետևանքով առաջացող հոգեբանական բացասական ներգործության սպառնալիքները՝ ըստ առաջատար հոգեբանների<sup>1</sup>



Համակարգչաֆոբիան մարդու վախն է արագ զարգացող տեղեկատվական միջավայրից, տեղեկության հոսքերի անհից ու բարդացումից, համակարգչի բացասական ազդեցությունից: Համակարգչամոլությունը համակարգչի հետ գործ ունենալու հիվանդագին ձգտումն է, որը վնասում է միջանձնային շփումը, հոգեկան առողջ հասունացումն ու սոցիալականացումը: Իր հերթին համակարգչամոլությունը հանգեցնում է կախվածության համակարգչային վիրտուալ իրականությունից: Այդ կախվածությունը կարելի է անվանել կյանքում համակարգչիչներով, համացանցով չափազանց տարվածությունը, որը հանդիսանում է իրականությունից հեռանալու միջոց և հանգեցնում սոցիալական, մասնագիտական, նյութական և ընտանեկան արժեքների խեղաթուրման կամ փոփոխության: Կարևոր է իմանալ, թե դեռահասը հատկապես

<sup>1</sup> Выгонский С. И., Обратная сторона Интернета: психология работы с компьютером и сетью, 2010, 316 стр.

ինչով է տարվել՝ վիրտուալ ծանոթություններով, առցանց առևտրով, թե՛ համակարգչային խաղերով: Առանձնահատուկ վտանգավոր են այն դերային խաղերը, որոնցում մարդը կորցնում է կապն իրական կյանքի հետ՝ լիովին կենտրոնանալով խաղի վրա: Իրեն փոխադրելով վիրտուալ աշխարհ՝ նա բացարձակապես լուրջ է ընդունում վիրտուալ աշխարհը և իր հերոսի գործողությունները համարում սեփականը:

Նոր տեխնոլոգիաների արագընթաց զարգացումն իրավունքի բնագավառում առաջացնում է նոր հիմնախնդիրներ և ստեղծում դրանց առավել արդյունավետ հաղթահարելուն ուղղված լուծումներ: Այսպիսով, մտավոր սեփականության իրավունքը, լինելով իրավունքի հնագույն ճյուղերից մեկը, ավելի լայն կիրառում ստացավ համացանցի առաջացմամբ: Ստեղծագործությունը՝ որպես մարդու ստեղծագործական մտքի գործունեության արդյունք, և օրենքի ուժով համապատասխանորեն չպաշտպանվելու դեպքում հեղինակի համար իրավական տեսանկյունից խոցելի երևույթ, առավել կարևորվեց համացանցի լայն օգտագործման հետևանքով: Հիմնական պատճառներից մեկն այն է, որ նորագույն տեխնոլոգիաների զարգացման արդյունքում գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների հեղինակներն իրենց ստեղծագործությունների հրապարակումը, տարածումը և հրապարակային ցուցադրություններն իրականացնում են համացանցային հարթակի միջոցով: Դա էլ իր հերթին առաջացնում և պահպանում է իրենց ստեղծագործությունների նկատմամբ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները՝ համապատասխանաբար ստանձնելով նաև պարտականություններ: Ըստ տարբեր վիճակագրական տվյալների՝ տեսալսողական բնույթի ստեղծագործությունները համացանցի միջոցով տարածվում են առավել լայն մասշտաբով և հաճախականությամբ: Այսպիսով, նորագույն տեխնոլոգիաների արագ զարգացման արդյունքում առաջ են գալիս մի շարք խնդիրներ, որոնք կարող են հանգեցնել բացասական հետևանքների, հատկապես ստեղծագործության հեղինակ, համահեղինակ ճանաչվածների կամ կոլեկտիվ հիմունքներով ստեղծագործությունը կառավարող կազմակերպությունների համար: Այդպիսի խնդիրներից է հենց հեղինակային և հարակից իրավունքների նկատմամբ այլ անձանց կողմից ոտնձգությունների կանխումն ու կանխարգելումը, որի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան վերահսկողական գործընթաց և մեխանիզմ: Այդպիսի վերահսկողական գործընթաց ստեղծելու բարդությունն այն է, որ համացանցային հարթակը վերացական բնույթի անկայուն աշխարհ է, որտեղ մարդկանց (օգտատերերի) վարքագիծը (գործողությունը կամ անգործությունը) միշտ չէ, որ կառավարելի է: Հետևաբար, միշտ չէ, որ հնարավոր է օրենքով սահմանված

վարքագծի կանոնները խախտող անձի ինքնությունը պարզել կամ նույնականացնել ու ենթարկել համապատասխան պատասխանատվության: Համացանցային ազատությունը, իր դրական կողմերով հանդերձ, հանգեցնում է հեղինակային և հարակից իրավունքների բավականաչափ քանակությամբ խախտումների: Ներկայումս համացանցի միջոցով հեղինակային կամ հեղինակության իրավունքի խախտումները նվազեցնելու նպատակով համացանցային տեսագրայտողական, սոցիալական, տեղեկատվական բազմաթիվ կայքեր, ինչպիսիք են “Youtube”-ը, “Facebook”-ը, “BBC News”-ը և այլն, իրենց կայքերում՝ «Ընդհանուր դրույթներ և պայմաններ» բաժնում, ներառում են կայքի շրջանակներում օգտատիրոջը տրված իրավունքների և պարտականությունների մասին դրույթներ: Համացանցում զետեղված ստեղծագործության հեղինակների գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները համաշխարհային իրավական նորմերի ստեղծման միջոցով ենթակա են ավելի կայուն պաշտպանվածության, քանի որ համացանցն ինքնին համաշխարհային է:

Այսպիսով, որպեսզի հստակ և լիարժեք հնարավոր լինի պատասխանել այն հարցին, թե հոգեբանամանկավարժական և իրավական ինչ սպառնալիքներ է պարունակում «համակարգչային և համացանցային» առօրյան հատկապես դեռահասների և պատանիների հոգեբանական տեսանկյունից փխրուն խմբի համար, անհրաժեշտ է՝ գիտության տարբեր բնագավառներ միավորվեն՝ բազմակողմանի հետազոտություններ կատարելու այդ ոլորտում, իսկ մանկավարժությունը՝ ղեկավարվելով «Հետազոտելով սովորեցրո՛ւ» իննովացիոն մեթոդով, պետք է գլխավորի աշխատանքը, քանի որ գիտաճյուղի գերխնդիրն առողջ սերնդի ձևավորումն է: Ցանկալի է, որ հնարավոր լինի պատրաստել նոր ձևաչափի մասնագետ՝ կրթության ոլորտի տեղեկութաբան-հոգեբան՝ իրավագիտական խոր գիտելիքներով, ինչը, կարծում ենք, հնարավոր է պատրաստել մանկավարժական բուհերի շրջանակներում, քանի որ մանկավարժական բուհում սովորողը ուսումնասիրում է ինչպես դասավանդման տարբեր մեթոդներ և մոտեցումներ («մանկավարժություն»), այնպես էլ հոգեբանական զանազան ասպեկտներ («հոգեբանություն») և տեխնիկական-տեղեկութաբանական հնարքներ («ինֆորմատիկա»), ստանում է նաև իրավագիտության հետ առնչվող անհրաժեշտ գիտելիքներ: Օրինակ՝ նման մասնագետն ունակ կլինի հետագայում ինքնուրույն մշակելու ծրագրավորված ուսուցումն իրականացնող ծրագրային փաթեթ: Որպես տեղեկութաբան՝ նա, կիրառելով իր գիտելիքները, կկարողանա մշակել ծրագրավորված ուսուցման համար նախատեսված ծրագրային փաթեթի ծրագրային մասը, լինելով հոգեբան՝ նկատի կունենա հոգեբանական տարբեր ասպեկտները, իսկ լինելով մանկավարժ՝ հաշվի կառնի ծրագրավորված ուսուցման մանկավարժական

պահանջները: Լինելով կրթության ոլորտի տեղեկութաբան–հոգեբան՝ կկարողանա լուծել զանազան խնդիրներ, մշակել ճկուն և բազմագործառությային կիրառական փաթեթներ, որոնք հնարավորություն կընձեռեն լուծելու կրթական ոլորտում ծանրացած խնդիրներ, իրականացնելու զանազան հետազոտություններ, օրինակ՝ համեմատական վերլուծության հիման վրա որոշելու համակարգչից սովորողների կախվածության մակարդակը, լուծելու ինչպես ընդհանուր կրթության, այնպես էլ ինֆորմացիոն հոգեբանության հետ կապված մի շարք այլ խնդիրներ, որոնք պահանջում են բազմագործոն մոտեցում: Մա շատ կարևոր հիմնախնդիր է, որի արդիականությունն աստիճանաբար մեծանում է, ինչը պայմանավորված է տեղեկությային հասարակության կայացման գործընթացով, առավել կարևոր է կրթության զարգացման ներկա պայմաններում, քանի որ գիտությունը և տեխնոլոգիան զարգանում են միջառարկայական, ներառարկայական և բազմառարկայական մոտեցման համատեքստում: Եվ միայն համակարգային վերլուծության տեսակետից այս բոլոր խնդիրների ուսումնասիրությունը թույլ կտա նոր տեսանկյունից նայել մանկավարժության ոլորտում առկա խնդիրներին, ինչպես նաև բացահայտել նոր հեռանկարներ միջառարկայական հետազոտությունների տեսության մեջ, կապել բնական և հումանիտար գիտությունների մեկուսացած թվացող բնագավառները:

Բացի նախկինում քննարկված ասպեկտներից, կարևոր է ընդգծել, որ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները ևս կարող են ունենալ դրական ազդեցություն սովորողների հոգեբանական զարգացման վրա: Մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ երբ սովորողներն օգտագործում են տեղեկատվական տեխնոլոգիաները վերահսկվող և նպատակաուղղված կերպով, ապա դրանք կարող են ունենալ դրական և կառուցողական ազդեցություն:

Այսօր համակարգիչը շատ կարևոր դեր ու նշանակություն է ստացել ժամանակակից մարդու կյանքում՝ ծառայելով նաև հանրային կրթության ոլորտին: Օրինակ՝ էլեկտրոնային դասագրքերն ու ուսումնական նյութերն արդեն սպառնում են հետին պլան մղել և փոխարինել իրենց ավանդական թղթային տարբերակներին: Տեղեկույթի ձեռքբերման ու հաղորդման ամենատարածված և ամենաարդյունավետ միջոցն արդեն դարձել է համակարգիչը: Հետևաբար սովորողների տեղեկատվական մտահասության (կոմպետենտության) պատշաճ մակարդակի ձևավորման խնդիրն այս դեպքում ստանում է առանձնահատուկ կարևորություն:

Տեղեկատվական գրագիտությունը ենթադրում է տեղեկույթի տարբեր աղբյուրների (գրքեր, տեղեկատուներ, հանրագիտարաններ, բառարաններ, քարտեզներ), տեղեկատվական սարքերի (հեռուստացույց, մագնիսոֆոն, հեռախոս,

Ֆարս, համակարգիչ, տպիչ, մոդեմ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (ձայնագրություն և տեսագրություն, էլեկտրոնային փոստ, ՁԼՄ, համացանց) օգնությամբ անհրաժեշտ տեղեկույթը ընտրելու, մշակելու, պահպանելու և հաղորդելու կարողություններ: Կարևորվում են ստացված տեղեկույթը քննադատորեն վերլուծելու, գնահատելու, այն տարբեր ձևերով ներկայացնելու և, սեփական գործունեությունը պլանավորելիս ու իրականացնելիս, դրանք առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու կարողությունները: Այս համատեքստում ուսուցչի խնդիրն է դառնում համակարգիչը դարձնել սովորողների ուսումնական գործունեության կարևոր միջոց, կրթության ցածր աստիճաններում ապահովել համակարգչային գրագիտության բավարար մակարդակ, իսկ բարձր աստիճաններում ընդլայնել տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունները:

### **Գլուխ 3 Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը առարկայի դասավանդման ընթացքում՝ որպես դիդակտիկ միջոց**

21-րդ դարը նոր տեղեկատվական տեխնոլոգիաների դար է, որը ստիպում է արձագանքել աշխարհի արագ փոփոխվող նոր մարտահրավերներին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զարգացած երկրների կրթական ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մեծ դեր է նշանակություն ունի ուսման որակի բարձրացման և քաղաքակիրթ անհատի ու քաղաքացու կերտման գործընթացում: Ուսուցման մեթոդների ընտրությունը փոխվում է ժամանակին համընթաց և նոր տեխնոլոգիաների ներդրմամբ պայմանավորված՝ առաջացնում անհրաժեշտություն վերանայելու ուսուցման բոլոր բաղադրիչները: Այսպիսով ուսուցման ավանդական մեթոդները փոխարինվում են ժամանակակից մեթոդներով, հնարներով՝ համադրելով ավանդական ու ժամանակակից մեթոդները:

Ուսումնական գործընթացում կրթության բովանդակության բարեփոխումների հիմքը կրթական համակարգի տեղեկատվայնացումն է և նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: Այսօր նոր տեխնոլոգիաներն ակտիվորեն թափանցում են մարդկային գործունեության ոլորտ, ապահովում հասարակության ներսում տեղեկատվական հոսքերի տարածումը և ձևավորում համաշխարհային տեղեկատվական տարածություն, որն էլ իր հերթին ազդում է հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա՝ ներառյալ կրթական համակարգի: Նոր տեխնոլոգիաների թափանցումը կրթության ոլորտ թույլ է տալիս որակական փոփոխությունների ենթարկել ոչ միայն ողջ կրթական համակարգը, այլև ուսուցման բովանդակությունը, մեթոդները և կազմակերպման ձևերը:

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» հասկացությունն այն բոլոր միջոցների ամբողջությունն է, որը ծառայում է տեղեկատվության ստեղծման, պահպանման, մշակման և զանգվածային լսարանին փոխանցելու համար: Համացանցը՝ որպես տեղեկատվության զանգվածային տարածման անկյունաքար, պարունակում է բազմաթիվ կրթական պորտալներ տարբեր տարիքային խմբերի և կրթական կարիքների համար, էլեկտրոնային բառարաններ ու հանրագիտարաններ, տեսալսողական նյութեր և այլ ուսումնական ռեսուրսներ: Կան նաև բազմաթիվ արբանյակային հեռուստատալիքներ և ռադիոհաղորդումներ, որոնք նույնպես կարող են օգտագործվել կրթական նպատակներով: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը

նպաստում է ուսումնական հաստատության կառավարման և ուսուցման գործընթացի առավել արդյունավետ ու համակարգված կազմակերպմանը՝ ի տարբերություն ուսուցման ավանդական միջոցների, և հնարավորություն են ստեղծում թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների ուսուցման արդյունավետության բարձրացման համար: Օրինակ՝ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցչին հնարավորություն է տալիս արագ կողմնորոշվել, թե աշակերտները որ հարցերին պատասխանելիս են դժվարացել, և ըստ այդմ՝ կազմակերպում է դասի հետագա ընթացքը: Բավականին նպատակահարմար են նաև ժամանակի խնայողության առումով, քանի որ ուսուցիչն անմիջապես տեսնում է ամբողջ դասարանի գրավոր աշխատանքի արդյունքները: Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն աշակերտին հնարավորություն է տալիս ձեռք բերել թե՛ տեխնոլոգիական, թե՛ առարկայական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ինչպես նաև նոր նյութը ամրապնդելու հնարավորություն՝ կատարելով անսահմանափակ թվով առաջադրանքներ: Հետևաբար այն խթանում է աշակերտի՝ սովորել սովորելու կարողությունը, հնարավորություն տալով նյութը սովորել ինքնուրույն, ինչպես նաև հայթայթել իրեն հետաքրքրող և անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն: Բացի այդ, աշակերտը կարող է օնլայն առաջադրանքները կատարել իրեն հարմար ցանկացած ժամի և ցանկացած վայրում՝ առանց որևէ սահմանափակման՝ ստանալով ժամանակը կառավարելու նկունություն: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ոչ միայն խթանում է աշակերտների ուսումնական դրդապատճառները, բարձրացնում ուսումնական գործընթացի արդյունավետությունը, նպաստում սովորողների ճանաչողական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացմանը, այլև հարստացնում ուսուցման մեթոդները և միջոցները: Այն նաև հնարավորություն է տալիս յուրաքանչյուր երեխայի նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում, պլանավորել և համակարգել աշխատանքը:

Կրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման համար պետք է բացահայտել դրանց դիդակտիկական գործառնությունները և ուսումնադաստիարակչական գործընթացում այդ տեխնոլոգիաների ինտեգրման և ներդրման արդյունավետ մեխանիզմները: Ուսումնական գործընթացում հնարավոր է իրականացնել հետևյալ դիդակտիկական գործառնությունները:

## **1. Սովորողների մոտիվացիայի բարձրացում**



Սովորողների մոտիվացիան ուսուցման արդյունավետության գործոններից մեկն է: Ուսումնական նոր միջոցների՝ նոր տեխնոլոգիաների ներդրմամբ հնարավոր է դառնում ուսումնական գործընթացը դարձնել բազմաբնույթ և սովորողներին ներգրավել ուսումնական գործընթացին: Օրինակ՝ սմարթ (խելացի) գրատախտակը հնարավորություն է տալիս ուսումնական նյութը հագեցնել տեսալսողական, անիմացիոն էֆեկտներով և կատարել փոխներգործուն (ինտերակտիվ) վարժություններ՝ ուսումնական գործընթացը դարձնելով ավելի ընկալելի և հետաքրքիր:

## **2. Ուսումնական գործընթացի « Մուլտիմեդիացում»**

Օգտագործելով թվային տեխնոլոգիաների ընձեռած անսահման հնարավորությունները՝ հնարավոր է մուլտիմեդիացնել ուսումնական գործընթացը, հագեցնել այն բազմազան միջոցներով: Օրինակ՝ ուսումնական նյութի ընկալումը հեշտանում է տեսալսողական զգայարանները միաժամանակ ակտիվացնելով: Տեսալսողական զգայարանների միաժամանակյա ակտիվացումը նաև ապահովում է լեզվական (վերբայ) մտածողությունից անցումը տեսողական (վիզուալ) և լեզվական մտածողությունների միասնականացմանը:

## **3. Ուսումնական գործընթացի անհատականացում**

Ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ ներդրումն այն դարձնում է ավելի բազմաբնույթ (դիվերսիֆիկացված)՝ դրանով իսկ բավարարելով յուրաքանչյուր սովորողի անհատական պահանջմունքները: Օրինակ՝ որոշ սովորողների համար ավելի արդյունավետ է դասախոսություն լսելը, մյուսների համար՝ լուսատախտակով ներկայացմանը հետևելը, տեսանյութեր դիտելը և այլն:

## **4. Ինքնուրույն ուսումնաճանաչողական գործունեության զարգացում**

Ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը նպաստում է սովորողների ինքնուրույն ուսումնաճանաչողական գործունեության զարգացմանը: Օրինակ՝ մուտք գործելով համաշխարհային սարդոստայն՝ սովորողն օգտագործում է հիպերտեքստեր: Իսկ յուրաքանչյուր հիպերհղում կարող է անմիջապես տալ նոր տեղեկատվություն և առաջացնել նոր հարցեր: Դեռ ավելին՝ հիպերհղումները

կարող են պարունակել ոչ միայն տեքստային տեղեկատվություն, այլ նաև ձայնային, տեսաձայնային և պատկերային նյութեր, որոնք կոչվում են հիպերմեդիա:

## **5. Տեղեկատվական գրագիտության զարգացում**

Ուսումնական գործընթացում նոր տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է ընձեռում զարգացնելու տարբեր աղբյուրներից անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու և այն սեփական կարիքների համար օգտագործելու կարողությունը: Այսօր տեղեկատվությունը դարձել է համաշխարհային տնտեսության շարժիչ ուժը և կրթության ու գիտատեխնիկական առաջընթացի կարևորագույն բաղադրիչ: 21-րդ դարում անհատն իր թե՛ անձնական կյանքում, թե՛ աշխատանքային և թե՛ ուսումնական գործունեության մեջ ունի տեղեկատվության առատ և բազմաբնույթ ընտրության հնարավորություն: Տեղեկատվությունը հասանելի է գրադարանների, համայնքային ռեսուրսների, մասնավոր կազմակերպությունների, մեդիայի ու համացանցի միջոցով: Սակայն տեղեկատվությունը մեզ հասնում է չգուված ձևաչափով՝ հարցեր առաջացնելով դրա հավաստիության, իսկության և հուսալիության վերաբերյալ: Դեռ ավելին՝ տեղեկատվությունը հանդես է գալիս նաև մուլտիմեդիայի տեսքով՝ ներառելով գրաֆիկական, ձայնային և տեքստային ձևաչափեր, ինչն էլ նոր խնդիրներ է առաջացնում դրա գնահատման ու ընկալման գործում: Ստացվում է՝ տեղեկատվության անորոշ որակը և մեծացող քանակը հասարակությանը մարտահրավերներ է նետում: Կարևոր է հասկանալ, որ տեղեկատվության մեծ ծավալն ինքնին չի կարող տեղեկացված հասարակությունն ստեղծել՝ առանց այդ տեղեկատվությունն արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ լրացուցիչ հմտությունների, որն էլ իր հերթին պայմանավորված է տեղեկատվական գրագիտությամբ:

## **6. Ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացում**

Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս զարգացնելու քննադատական մտածողությունը՝ բազմաթիվ աղբյուրներից տեղեկություն ստանալով, դրանք քննադատորեն վերլուծելով, համեմատելով ու համադրելով: Նոր տեխնոլոգիաները նաև ընձեռում են ստեղծագործական մտածողությունը զարգացնելու հնարավորություն ինքնարտահայտման տարբեր ձևերի միջոցով, ինչպիսիք են՝ տեքստային, տեսաձայնային, պատկերային:

Այսպիսով, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը և դիդակտիկական գործառնությունները կրթության ոլորտում հնարավորություն են տալիս որակական փոփոխությունների ենթարկել ոչ միայն ողջ կրթական համակարգը, այլ նաև ուսուցման բովանդակությունը, մեթոդները և կազմակերպման ձևերը: Հետևապես, նոր մեթոդաբանության ներմուծումը կարելի է մեծապես ծառայեցնել լեզվակրթության արդյունավետության բարձրացմանը և պետք է հնարավորություն տա սովորողներին զարգացնելու իրենց մտավոր կարողությունները, ապահովելու ուսուցման գործընթացի հումանիզացումը, անհատականացումը, կոմպետենտությունը և ինտենսիվացումը, որն էլ կարող է բարելավել կրթության որակը համակարգի բոլոր մակարդակներում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ժամանակակից աշխարհում կրթական համակարգը պետք է պարբերաբար լրացվի ու զարգանա: Այսօր տեղեկատվական տեխնոլոգիաներն ունեն լայնածավալ ազդեցություն կրթական համակարգի վրա, որն էլ իր հերթին նպաստում է գիտելիքների արագ զարգացմանը, որոշների արդիականության կորստին և հետևապես ուսուցման ծրագրերի բովանդակության փոփոխությանը:
- Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը և դիդակտիկական գործառույթները կրթության ոլորտում հնարավորություն են տալիս որակական փոփոխությունների ենթարկել ոչ միայն ողջ կրթական համակարգը, այլ նաև ուսուցման բովանդակությունը, մեթոդները և կազմակերպման ձևերը:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծումը կրթության ոլորտ նպատակ ունի ապահովել «ճկուն» ուսումնառություն, որը ենթադրում է կրթական կառույցների, ուսուցիչների, դասախոսների, աշակերտների և ուսանողների միջև բազմաշերտ փոխհարաբերություններ՝ առաջացնելով ուսուցման մեթոդների ու միջոցների նորովի մոտեցման անհրաժեշտություն: Այն խթանում է ինտերակտիվ և կենսունակ ուսուցման մեթոդները՝ հիմնված «աշակերտակենտրոն» և «ուսանողակենտրոն» մոտեցումների վրա, որոնք էլ սովորողներին դարձնում են առավել ակտիվ ու ստեղծագործ:
- Ուսուցման մեթոդները պետք է նպաստեն սովորողի ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
- Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների վերահսկելի կիրառումը կարող է ունենալ դրական ազդեցություն և արդյունքներ սովորողների գիտելիքների ձեռքբերման ու հոգեբանական զարգացման վրա:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Անտոնյան Լիլիթ, Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիական գործիքների կիրառման հնարավորությունները ուսուցման գործընթացում, ՀԳՄՀ, Հայաստան, 2021,  
[http://publications.y-su.am/wp-content/uploads/2021/10/Antonyan\\_Lilit.pdf](http://publications.y-su.am/wp-content/uploads/2021/10/Antonyan_Lilit.pdf)
- Աջամողյան Արմեն, Եղիազարյան Կարինե, Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն էլեկտրոնային ուսուցման գործընթացում և հիմնախնդիրները, 2022,  
<http://publications.y-su.am/wp-content/uploads/2022/09/Ajamoghlyan-ArmenEghiazaryan-Karine.pdf>
- Հարասիմ Լինդա, Ուսուցման տեսություն և առցանց տեխնոլոգիա (1-ին խմբ.). Ռաթելջ, 2011,  
<https://wladimirbarrozo.files.wordpress.com/2011/09/introduction-to-learning-theory-and-technology.pdf>
- Մադոյան Ռ., Տ. Մադոյան, Ուսումնական գործընթացի արդիականացում կամ համակարգիչը դարձրոցում, «Մանկավարժություն», 2012 թ.
- Շահգարի Հարիբ Դոլամ, Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը Իրանի բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգում, ԵՊՀ, Երևան, 2014,  
[https://etd.nla.am/4285/1/065\\_Shazari.pdf](https://etd.nla.am/4285/1/065_Shazari.pdf)
- Выгонский С. И., Обратная сторона Интернета: психология работы с компьютером и сетью, 2010.
- Николаюк И. В., Информационные коммуникационные технологии в образовании: Учебное пособие для студентов педагогических специальностей / И. В. Николаюк, Е. Е. Капанина. Чита: Забайкал. гос. гум.–пед. ун–т., 2010.